Երեսունամյա Գլաձորի երեց նախորդը

Սարգսյան Ս. Թ.
պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ԳԱԱ պատմության ինստիտուտի առաջատար գիտաշխատող (Երևան, Հայաստան)
sargsyansuren@yandex.ru

Վճռորոշ բառեր՝ համալսարան, վանք, վարդապետական աստիճան, ձեռագիր հիշատակարան, հովանավոր, կրթություն, մշակույթ

Старейший предшественник тридцатилетнего Гладзора

Саргсян С. Т.
Институт истории НАН РА (Ереван, Армения)
sargsyansuren@yandex.ru

Аннотация: Считающийся первым армянским университетом Гладзорский университет был основан в Вайоц Дзоре в 1282 г. Нерсесом Мшеци в монастыре Ахберц. Он явился наиболее совершенным, организованным и функционирующим продолжительное время учреждением в цепи средневековых высших школ (вардапетараны) Армении и поднял высшее образование на новый уровень.
Языком преподования в Гладзоре был армянский, а время обучения – 7-8 лет. Помимо теологии, студенты овладевали семью светскими науками – грамматикой, ораторством, логикой, арифметикой, теорией музыки, геометрией и астрономией. По завершению обучения выпускники защищали научный тезис и получали степень вардапета.
Ключевые слова: университет, монастырь, степень вардапета, рукописные мемуары, спонсор, образование, культура

Oldest predecessor of the thirty-year-old Gladzor

Sargsyan S. T.
Institute of history of NAS RA (Yerevan, Armenia)
sargsyansuren@yandex.ru

Abstract: Gladzor University, considered the first Armenian university, was founded in Vayots Dzor in 1282 by Nerses Mshetsi in the Akhberts monastery. It was the most perfect, organized and functioning institution for a long time in the chain of medieval higher schools (vardapetaran) in Armenia and raised higher education to a new level.
The language of instruction in Gladzor was Armenian, and the training time was 7-8 years. In addition to theology, students mastered seven secular sciences - grammar, oratory, logic, arithmetic, music theory, geometry and astronomy. Upon completion of their studies, graduates defended their scientific thesis and received a vardapet degree.
Keywords: university, monastery, vardapet degree, handwritten memoirs, sponsor, education, culture

Այս տարի լրանում է Երևանի Գլաձոր համալսարանի հիմնադրման 30-ամյակը: Այդ կարևոր իրադարձությունը նշանավորելու համար տողերիս հեղինակին առաջարկվեց գրել համալսարանի կարճատև, սակայն բովանդակալից պատմությունը: Բնականաբար անհրաժեշտություն առաջացավ ուսումնասիրությունն սկսել երեց եղբորից՝ Առաջին Գլաձորից, որն էլ սույն հոդվածը գրելու առիթը դարձավ:

«Համալսարան» բառը վաղնջական ժամանակներից ի վեր Հայաստանում գոյություն ուներ: Այն հիշատակված է մեսրոպատառ առաջին մատյանների էջերում ու մեզանում էլ պիտի մի օր իրականություն դառնար: Համալսարանատենչ հայ երիտասարդներն այլ երկրներում կրթություն ստանալով՝ վերադառնում էին հայրենիք և ջանում էին իրենց գիտելիքներով մայր հողում ստեղծել կրթական օջախներ: Իրենց սաներին նրանք ուսուցանում էին դրսից բերած գրքերով և նրանցով, որ ստեղծում էին իրենք՝ պատմահայր Մովսես Խորենացին, փիլիսոփա դասակից Դավիթ Անհաղթը, հանրագիտակ Անանիա Շիրակացին և այլք: Դարերով փայփայած սեփական համալսարանն ստեղծեց թաթար-մոնղոլների տիրապետության դժնդակ տարիներին: Դա Սյունիք նահանգի Վայոց ձորում հիմնադրված Գլաձորի համալսարանն էր:

Գլաձորի համալսարանը եղել է իր ժամանակի կրոնական, հասարակական, քաղաքական, փիլիսոփայական և ստեղծագործական մտքի զարգացման կենտրոն: «Երկրորդ Աթենք պանծալի», «Մայրաքաղաք իմաստության», «Գերահռչակ» այդ համալսարանը միջնադարյան Հայաստանի հոգևոր, գիտական և հասարակական կյանքում ունեցել է մեծ դեր ու նշանակություն: Այստեղ են բարձրագույն կրթություն ստացել, գործել և ստեղծագործել անվանի հայ մտավորականներ Ներսես Մշեցին, Եսայի Նչեցին, Հովհաննես Օրբելը, Մխիթար Սասնեցին, Հովհաննես Որոտնեցին, Խաչատուր Կեչառեցին, Թորոս Տարոնացին, Ավագը, Մոմիկը և այլք:

Համալսարանի պատմության շատ հարցեր կուսաբանել են անվանի գիտնականներ Ղ. Ալիշանը, Գ. Հովսեփյանը, Լ. Խաչիկյանը, Ա. Մովսիսյանը, Ա. Ավետիսյանը, Լ. Խաչերյանը, Փ. Անթաբյանը, Էմ. Պիվազյանը, Ս. Բարխուդարյանը, Ա. Աբրահամյանը, Ա. Մաթևոսյանը, Ի. Ղարիբյանը: Իսկ ուսումնասիրության հիմնական աղբյուրը են եղել ձեռագրերը, որոնք գրվել են տեղում սովորող աշակերտների կամ դաստուների ձեռքով և ծառայել են ուսումնական հիմնական ձեռնարկները:

Հայաստանի միջնադարյան բարձրագույն դպրոցների՝ վարդապետարանների, շարունակական շղթայի մի հզոր օղակը հանդիսացող Գլաձորի համալսարանը բարձրագույն կրթությունը հասցրեց նոր մակարդակի: Այն ի ր ընդհանուր մշակութային, ուսումնագիտական, ազգային և հասարակական-քաղաքական եռանդուն գործունեությամբ խոր հետք է թողել հայ իրականության մեջ ամենից առաջ իր ժողովրդին ամենանվեր ծառայելու նպատակադրվածությամբ, ծավալած մանկավարժական վիթխարի և համարձակ գործունեությամբ, որի համար էլ հայ իրականության մեջ **առաջինը կոչվեց համալսարան:**

Վարդապետական ուսուցման հիմնադիրները հայոց մեջ եղել են Մեսրոպ Մաշտոցն ու Սահակ Պարթևը: Առաջին հայագիր-հայալեզու դպրոցն էլ բացվել է Վաղարշապատում, որից հետո հիմնվում է կենտրոնական վարժարան: Այստեղ աշակերտներից ընդունակները ձեռք բերելով ուրիշներին սովորեցնելու հմտություն, մեկնում էին Հայաստանի տարբեր կողմերում ուսուցանելու [**1**]: Ա. Ալպոյաճյանի վկայությամբ, Վռամշապուհի կողմից հովանավորվող Վաղարշապատի մայր վարժարանն այդ շրջանում Հայաստանում գործող միակ բարձրագույն ուսումնարանն էր: Այն գրեթե ոչնչով չէր տարբերվում հունական բարձրագույն դպրոցներից, քանի որ այստեղ էլ էին ուսուցանվում քրիստոնյա դաստիարակության անհրաժեշտ համարվող քերականությունը, հռետորաբանությունը և տրամաբությունը (դիալեկտիկա) [**2**]:

Հայոց մեջ առաջինը Դավիթ Անհաղթն առաջադրեց քառյակ գիտությունների՝ թվաբանության, երաժշտության, երկրաչափության և աստղաբաշխության ներդրումը ուսումնակրթական ծրագրում՝ որպես բարձրագույն կրթության հիմք: Անանիա Շիրակացին էլ VII դ. երկրորդ կեսի սկզբներին մարմնավորեց Դ. Անհաղթի այդ առաջարկը և, որպես բարձրագույն կրթության հիմք, գրեց ‘Քննիկոն’ համայնագիտական դասագիրքը [**3**]: Վարդապետական ծրագիրն ավելի խորացվեց Անիի և Հաղբատի վարդապետարաններում XIդ. վերջին և XII դ. սկզբներին: Նրանց հայրենանվեր գործը շարունակվեց Գլաձորի համալսարանում, որտեղ ‘նորոգեցաւ զաստիճան վարդապետութեան լուսաւորչացն մերոց» [**4**]:

Սովորաբար միջնադարյան Հայաստանում «մեր իմացական կյանքին վառարանները և հայ քաղաքակրթության պահապանները»՝ դպրոցները որևէ վարդապետի անձի հետ էր կապված: Այդպիսի **կատարյալ կազմակերպված և տևական հաստատություններից մեկը Գլաձորի համալսարան էր, որի հիմնադիրը Հայոց վարդապետարանի նոր բաբունապետ Ներսես Մշեցին էր:** Նա հունական կրթություն ուներ, տիրապետում էր մի քանի լեզուների: Բարձր էր գնահատում հույների կրթական համակարգը: Հանգամանք, որը հետագայում իր դրոշմն է դնում Ներսես Մշեցու և **նրան հաջորդող ու նրա աշակերտ Եսայի Նչեցու** մանկավարժական և կազմակերպական աշխատանքների որակի վրա: Պատահական չէր, որ նրանց դպրոցը կոչվում էր ‘երկրորդ Աթենք», որտեղ ուսուցումը տարվում էր ‘ըստ էլլադական սահման պայմանի» [**5**]:

Ուսումնակրթական գործին զուգընթաց, Ն. Մշեցին վարդապետական ծրագիրը կատարելագործելու համար նաև անհրաժեշտ

երկեր ու ձեռագրեր էր ընդօրինակել տալիս: Այսպես՝ 1282 թ. Ստեփանոս գրիչը Ներսեսի համար ավարտում է մի ձեռագիր, որը սրբագրում է Եսայի Նչեցին: Մեկ այլ՝ 1283-1284թթ, գրած ձեռագրում Մատթեոս Կիլիկեցին հիշում է, որ Ներսես բաբունապետի դպրոցի ապաստարանը. «Հայս գաւառի, որուն անուն Վայձոր կոչի, Յերկրորդ Աթէնս պանծալի, Առ ոտս հաւր մեր Ներսէսի» [6]: Նշանակում է **1282 թ,** գարնանը **Ներսես Մշեցին իր դպրոցը հաստատում է Վայոց ձոր գավառի Աղբերց վանքում, որը հետագայում վերանվանվում է Գլաձորի վանք, իսկ վարդապետարանը՝ Գլաձորի համալսարան[1]:** Նշենք, որ Վայոց ձորի Աղբերց վանքի անմիջական տերերը Պռոշյաններն էին, Սյունյաց աշխարհի ընդհանուր տերերը՝ Օրբելյան իշխանները, իսկ հոգևոր տերը՝ Սյունյաց մետրոպոլիտը, որոնք էլ հովանավորում էին Գլաձորի համալսարանը, շինություններ կառուցում և սնունդ ապահովում:

Եսային կազմում է մի ժողովածու, որտեղ առաջին անգամ հիշվում է որպես վարդապետ և որի մեջ տրված էին համալսարանի ստեղծման հանգամանքները: **Ն. Մշեցու մահից հետո ստանձնելով Գլաձորի համալսարանի բաբունապետությունը, Եսայի Նչեցին** (Սասնո գավառի Նիշ գյուղից) ավելի սերտ հարաբերություններ է ստեղծում Օրբելանների հետ և ավելացնում համալսարանի նյութական հնարավորությունները: Շատանում են աշակերտները, բարձրանում է համալսարանի և նրա բաբունապետի հեղինակությունը: Ուսումնական ծրագրի հագեցվածության համար, ձեռնարկումներին զուգընթաց, նա սկսում է ճակատել նաև Արևմուտքից եկող կաթոլիկական վտանգի դեմ և Սյունյաց մետրոպոլիտի հետ ղեկավարել այդ պայքարը: Եսայի Նչեցին իրեն այնքան ուժեղ էր զգում իր աշակետներով, որ նրանց հետ միասին հանդես էր գալիս հանուն հայ ժողովրդի շահերի պաշտպանության, իսկ միարարական շարժման հետևանքով եկեղեցական կարգերի ու ժամասացության մեջ առաջացած շփոթը հստակելու համար Արևելյան Հայաստանի վարդապետները և վանքերի առաջնորդները դիմում են Եսայի Նչեցուն՝ նրանից իմանալու եկեղեցական կարգերի և ժամասացության ճշգրտությունը: Նչեցին պատասխանում է նրանց և հորդորում լինել հավատարիմ նախնիների ավանդներին:

Ի՞նչ էին դասավանդում Գլաձորի համալսարանում:

Գլաձորում դասավանդման լեզուն հայերենն էր, և ուսումնառությունը սերտորեն կապված էր հայրենի մշակույթի հետ: Համալսարանի հիմնադիր հովանավորը եղավ Վայոց ձորի նահանգապետ Պռոշ Իշխան Խաղբակյանը: Համալսարանն ուներ երեք՝

1. Եկեղեցական և աշխարհիկ դպրության,
2. Գրչության արվեստի,
3. Խազագիտության և երաժշտության լսարաններ:

Գլաձորի վարդապետական ուսուցման կարգի և առարկաների մասին տեղեկություններ ստանում ենք այնտեղ գրված ձեռագրերի, մասնավորապես **Եսայի Նչեցու «Ոսկեփորիկի»,** մատենագրական գործերի ու ձեռագրերի մեջ պահպանված հիշատակություններից, ինչպես նաև՝ նրա շրջանավարտների հիմնած դպրոցների գործունեությունից: Դրանցում կա **մի ցանկ, որը լիակատար գաղափար է տալիս Գլաձորի ուսումնական ծրագրերի մասին: Դա Գլաձորի անմիջական շարունակություն հանդիսացող Որոտնավանքի և Տաթևի համալսարանում դասավանդված առարկաների թվարկումն է,** որը բերում է այդ համալսարանի շրջանավարտներից Թովմա Մեծոփեցու կենսագիր Կիրակոս բանասերը: Վերջինս, անդրադառնալով իր ուսուցչի ստացած վարդապետական կրթության ծավալին, գրում էր, որ նա առաքինի էր, կրթությամբ և գործնական կյանքում ուսումնական ու պարկեշտ, երաժշտական, երկրաչափական և աստղաբաշխական հարուստ գիտելիքներով օժտված, փայլուն ճառասաց էր և փիլիսոփա, քաջածանոթ էր հունական դպրոցներին [7]:

Գլաձորի համալսարան ընդունվում էին միջնակարգ կրթություն ունեցող երիտասարդներ: **Գլաձորի վարդապետական ծրագիրն**

[1] Գլաձորը որպես «Աթենք պանծալի» հիշատակվում է Մատթեոս գրչի կողմից 1283-1284 թվականների (Վիեննայի Մխիթարյան միաբանության մատենադարանի № 571) ձեռագրում: Սակայն մի շարք հիշատակություններում ուսումնական կենտրոնի հիմնադրումը կապում են 1279-1281 թվականների ժամանակահատվածի հետ՝ Թանահատի վանքի հիմնադրման (1279 թվական), ապա նաև համալսարանի առաջին ուսուցչապետ Ներսես Մշեցու Մշո Առաքելոց վանքից տեղափոխվելու և գլաձորյան դպրության կենտրոնը հիմնադրելու թվականի հետ (1280 թվական):

ընդգրկում էր աշխարհիկ և հոգևոր կրթությանը վերաբերող առարկաների մի ամբողջ համակարգ: Ուսանողները պարտավոր էին **ուսումնառության 7-8 տարիների ընթացքում** աստվածաբանությունից բացի **տիրապետել** «արտաքին», այսինքն՝ **աշխարհիկ գիտություններին** և արվեստներին: Դրանք **կոչվում էին «ազատ արվեստներ և թվով յոթն էին:**

Առաջին երեքը՝ **քերականությունը, ճարտասանությունը և տրամաբանությունը,** կազմում էին **եռյակ**, մյուս չորսը՝ **թվաբանությունը, երաժշտության տեսությունը, երկրաչափությունը և աստղաբաշխությունը՝ քառյակ գիտություններ**: Այդ առարկաները դասավանդելու համար **Գլաձորի համալսարանում օգտագործվել են նաև ոչ քրիստոնյա, հեթանոս, անտիկ փիլիսոփաների և եկեղեցական հեղինակավոր գիտնականների աշխատություններն ու մեկնությունները:**

Ուսումնառության շրջանն ավարտելուց հետո Գլաձորի համալսարանի շրջանավարտին շնորհվում էր վարդապետական աստիճան, որը րաբունապետության կողմից ղեկավարվող ու անցկացվող արարողություն էր և կրում էր գիտական-պաշտոնական բնույթ: Շրջանավարտները 7-8 տարի ուսանելուց հետո անցած դասընթացից պատրաստում էին քննաճառ և պաշտպանում գիտական աստիճան: Պաշտպանությունն իրականացրել է համապատասխան հանձնաժողովը, որին ներկա են եղել րաբունիներ, արդեն պաշտպանած շրջանավարտներ, ինչպես նաև հրավիրված հոգևոր և աշխարհիկ իշխանության ներկայացուցիչներ: Ատենախոսությունների պաշտպանությունը տեղի են ունեցել Գլաձորի վանքում, իսկ պսակադրողը եղել է համալսարանի րաբունապետ Եսայի Նչեցին: Գլաձորն այդ ժամանակ անմրցակից էր: Այստեղ սովորելու էին գալիս Հայաստանի հեռավոր շրջաններից և անգամ Կիլիկիայից: Դասավանդում էին հռչակավոր ուսուցիչներ՝ Եսայի Նչեցին, Դավիթ Սասնեցին, Թորոս Տարոնացին, հռչակավոր գրիչ, նկարիչ և ճարտարապետ Մոմիկը: Հայ միջնադարյան մշակույթում հռչակված է Գլաձորի համալսարանի գրչական մանրանկարչության դպրոցը, որը ճանաչվել է որպես ինքնուրույն՝ Գլաձորյան դպրոց, որտեղ իշխում էր սևի և ոսկեգույնի համադրությունը: Գլաձորի նշանակալի արժեքներից է նաև այն, որ այստեղից սկզբնավորվեցին նոր դպրոցներ:

Այսպես, Գլաձորի սաներից Առաքել Հաղբատեցին, որը համալսարանն ավարտելուց հետո Թիֆլիսի հոգևոր դպրոցի րաբունապետն էր, իր ուսուցչի գործունեության արդյունքն այսպես է ներկայացնում. «թողլով զաւակ ժառանգութեան բազում ի ծոցս եկեղեցւոյ և ի հանդիսարանս վարժարանացն»: Գլաձորի համալսարանը պատրաստում էր եկեղեցու սպասավորներ և վարժարանների վարդապետներ, ուսուցիչներ, որոնք կոչվում էի րաբունիներ: Համալսարանում քահանայական աստիճան ունեցողներին ընդունելուց բացի, տեղում ևս պատրաստում էին քահանաներ, այսինքն՝ **Գլաձորում կար և' քահանայական, և' վարդապետական լսարան, այստեղից էլ համալսարան անվանումը:** Վարդապետարանին ոչ միայն տեղի քահանայական լսարանն էր սաներ տալիս, այլև Գլաձորի շրջանավարտների դպրոցները: Դավիթ Գետկեցին նկարագրում է, թե ինչպես էր Նչեցին աշակերտներ հավաքում. «...ցուպ ի ձեռին առեալ, զտհաս և զանիմաստ համբակս ժողովէ ի փարախս իմաստութեան, բազում զաւառաց» [**8**]: Բազմաթիվ աշակերտների (Նչեցին օրինակ՝ 360 հոգու) քահանայական և վարդապետական աստիճաններ շնորհելուց հետո ուղարկում էր իրենց գավառները, «ի հանդիսարանս վարժարանացն»:

Սովորաբար եկեղեցու սպասավորների մասին որ հիշատակարաններում տեղեկություններ քիչ են պահպանվել: **Համալսարանի առաջին շրջանավարտներից է Ստեփանոս Օրբելյանը**՝ Սյունյաց եպիսկոպոսը՝ պատմիչ, բանաստեղծ: Նրա հաջորդներն էին **Հովհաննես Օրբելը, կրտսեր Ստեփանոսը,** որոնք եկեղեցական նվիրապետական պաշտոնավարությունից բացի, բեղմնավոր մշակութային գործունեություն են ծավալել: Եկեղեցական խելացի գործիչ էր **Կարապետ Տոսպեցին**, որը հայրենասիրական եռանդուն գործունեություն է ծավալել Երուսաղեմում:

Գլաձորի որոշ սաներ առանձին թեմերի առաջնորդներ էին: Իսկ րաբունապետները դպրոցներ ղեկավարելիս իրենց կապերն ամուր էին պահում «մայր իմաստից» համալսարանի և նրա ուսուցչապետների հետ ոչ միայն անհրաժեշտ ձեռնարկներ ընդօրինակե-

լու, այլև խորհրդակցելու և համապատասխան ցուցումներ ստանալու համար: **Գլաձորի համալսարանը սերտ կապերի մեջ էր** նաև այն **դպրոցների հետ**, որոնք գոյություն ունեին մինչև նրա Վայոց ձորում հաստատվելը: Այդպիսիք էին Գրիգոր բաբունապետի՝ **Բջնիի և Թեղենիքի դպրոցները**, ինչպես նաև **Վերին Նորավանքի դպրոցը**, որի Դավիթ բաբունապետը Օրբելյանների եպիսկոպոսանիստ Նորավանքի առաջնորդն էր, իսկ հետո աշխատել է Գլաձորում: Հայտնի է, որ նրան փոխարինել է Գլաձորի մեկ այլ սան Կյուրիոնը:

Գլաձորի սաների հիմնած և նրանց ղեկավարած դպրոցներից էր համալսարանի **առաջին սաներից Մխիթար Սասնեցու հիմնած Մեծոփա վանքի դպրոցը**: Մեզ է հասել Ե. Նչեցու հանձնարարությամբ Մ. Սասնեցու շարադրած մի ժողովածու: Այն ուղղված էր միաբարների դեմ, որի համար կաթոլիկները նրան ամբաստանում են Հռոմի պապի առջև: Հայտնի նաև **Այրիձորի դպրոցի հիմնադիր Հովհաննես Արճիշեցին,** որը Մխիթար Սասնեցու դասընկերն է եղել Գլաձորում և նրա գործակիցը Քաջբերունիքում: Գրել է պատարագի մեկնություն: Նախորդների դասընկերն ու նրանց գործակիցն է եղել **նաև Ստեփանոս Արճիշեցին**, որը Մ. Սասնեցու աշակերտ Մկրտչի հետ գրել է Մխիթար Սասնեցու վարքը: Կողբավանքի դպրոցի հիմնադիրն է եղել **Մատթեոս Մլիճեցին,** որն աշխատել է Այրարատյան աշխարհի Կողբա Ս. Մարի վանքում: Հայտնի շրջանավարտներից նաև **Առաքել Հաղբատեցին**, որն ավարտելով Գլաձորի համալսարանը՝ ղեկավարել է Թիֆլիսի դպրոցը: Գլաձորի համալսարանի շրջանավարտներից է եղել նաև **Ավետիս Հաղբատեցին**, որը համալսարանն ավարտելուց հետո վերադարձել է Հաղբատ ուսուցչության: **Կիրակոս Երզնկացին** ևս ուսանել է Գլաձորում և աչքի է ընկել իր խելացի և իմաստուն հատկանիշներով, որի համար նախատեսված էր, որ փոխարինի է Եսայի Նչեցուն, սակայն հանգամանքների բերումով վերադառնում է հայրենի գավառ և դառնում տեղի բաբունապետը: Նշանավոր շրջանավարտներից էր նաև **Հովհաննեսը՝** Կիրակոսի եղբորորդին: Նա իր հորեղբոր հետ միասին աշխատել է Երզնկայի դպրոցում: Գլաձորի շրջանավարտներից **էր Սալմաստի դպրոց ավագ բաբունապետը,** որը նախապես աշխատել է Ատրպատականում, ապա՝ Թիֆլիսում, որից հետո կարգվել է Սալմաստի դպրոցի բաբունապետ: Հայտնիներից է նաև **Մկրտիչ Թեղենացին, որը** Գրիգոր Բջնեցի բաբունապետի մոտ քահանայական կրթություն ստանալուց հետո ուսանում է Գլաձորի համալսարանում, ապա վարդապետական աստիճան և դասախոսելու իրավունք ստանալուց հետո վերադարձել է հայրենի Թեղենիք և կարգվել տեղի դպրոցի բաբունապետ: Կիլիկիայի Գորովանքի դպրոցի ներկայացուցիչ **Վարդան Կիլիկեցին** ևս 1289թ. Գլաձորի համալսարանում է վարդապետական աստիճան ստանում, վերադառնում է Կիլիկիա, զբաղվում գրչությամբ և ուսուցչությամբ: **Հովհաննես Քռնեցին** ևս ավարտելով Գլաձորի համալսարանը, 1328 թ. նշանակվում է Երնջակի շրջանի հոգևոր առաջնորդ, ապա տարվելով կաթոլիկական գաղափարներով, դառնում է միաբարների առաջնորդ և Քռնայի իր դպրոցում ունիթորական գրականություն է թարգմանում ու տարածում նրանց գաղափարները: Նշանավորներից է նաև բաբունապետ, թարգմանիչ և մատենագիր **Հովհաննես Ծործորեցին: Նա** ևս ավարտել է Գլաձորի համալսարանը և աշխատել է Արտազի Ծործոր վանքում, որտեղից էլ նրա Ծործորեցի մականունը: Տարոնի դպրոցից էր **Ներսես Տարոնացին**: Առաքելոց վանքից գալով և ավարտելով Գլաձորի համալսարանը, հարում է միաբարներին և աշխատում Առաքելոց վանքում:

1338թ Եսայի Նչեցին. մահաում է և նրա հետ մեռնում է նաև դպրոցը Գլաձորում: «Այս վանքի պատմությունը տարօրինակ սկիզբ և վախճան ունի, - գրում է Գ. Հովսեփյանը,-անհայտությունից հանկարծ երևան է գալիս ԺԴ դարի ութսունական թվականի սկզբում, իբրև Արևելյան Հայաստանի մտավոր կենտրոն, և հանկարծ չքանում անհայտության մեջ ԺԴ դարի կեսին: Անորոշ է նույնիսկ տեղը» [**5**]: Սա ճիշտ է. մինչև վարդապետարանի այնտեղ հաստատվելը վանքն անհայտ էր, համալսարանի տեղափոխվելու հետ էլ անհայտացավ: Այս հանգամանքը ցույց է տալիս, որ, իսկապես Աղբերց վանքը եղել է Սյունիքի աննշան վանքերից: Սակայն այն, **ինչ ասվեց Գլաձորի վանքի մասին, Գլաձորի համալսարանին չի**

վերաբերում: Եսայի Նչեցու համալսարանը հայոց նախորդ վարդապետարանների շարունակությունն էր և «անհայտությունից հանկարծ երևան չեկավ, ոչ էլ «հանկարծ չքացավ անհայտության մեջ»:

Հայոց միջնադարյան առաջին համալսարանին վիճակված էր անցնելու երկար ճանապարհ, տարբեր ժամանակներում հաստատվել տարբեր վանքերում և պահպանել ու հարստացնել ստեղծված ավանդույթները թե' ուսուցման ու դաստիարակության և թե' հասարակական-քաղաքական գործունեության ասպարեզներում և այդպես ընկալվել դեռևս միջնադարում: Տաթևի համալսարանի բարունապետներից Մատթեոս Ջուղայեցին, Գրիգոր Տաթևացու վարքը շարադրելիս, գրում է. «Մեծ փիլիսոփայն Յոհաննէս Որոտնեցին ... զկնի մահուանն իւր ետ հրաման (Գրիգոր Տաթևացուն- Ս. Ս.) նստել յաթոռ մեծ համալսարանին Եսայեայ և բարունապայետ Հայոց Մեծաց» [**8**]: Այսինքն՝ **Տաթևի համալսարանը շարունակությունն էր «մեծ համալսարանին Եսայեայս»**:

1338թ. Գլաձորի համալսարանը երկրորդ բարունապետ Տիրատուր Կիլիկեցու գլխավորությամբ թողնում է Գլաձորի վանքը և հաստատվում Վայոց ձորի Հերմոնի վանքում, որը գտնվում էր Օրբելյանների տիրույթում: Անտարակույս, դա կապված էր քաղաքական պայմանների փոփոխության հետ, որոնք տեղի էին ունենում Հայաստանում, մոնղոլական պետության վերջին տարիներին: Այդ ժամանակ, իշխանական մյուս տոհմերի հետ, հալածվեցին և աղքատացան նաև Պռոշյանները, համալսարանը կորցրեց հիմնական հովանավորողներից մեկին, իսկ Եսայի Նչեցու մահվամբ՝ նաև բարունապետին: 1338թ. Գլաձորի համալսարանի սաներից Գրիգորը ձեռագիր է ընդօրինակում, որում ասվում է, թե **Տիրատուրը** եկել էր Կիլիկիայի Մլիճի վանքից: Նա 1339 թ. Գլաձորում ընդօրինակում է մի Ավետարան, արդեն բարունի էր [**5**]: Ավելի ուշ հիշվում է Եսայի Նչեցու հետ՝ որպես մեծ բարունապետ: Նրա աշակերտները ձեռագիր էին ընդօրինակում՝ առ ոտս մեծ բարունապետացն Յեսայի և Տիրատրոյ [**5**]:

Հերմոնի վանքում տեղավորված հայոց համալսարանի մասին շատ քիչ տեղեկություն ունենք: Այստեղի **աչքի ընկնող սաներից էին հիշյալ Գրիգորը, Կիրակոսը և Հովհան Որոտնեցին:** Վերջինս 1337 թ. Նչեցուց քահանայական աստիճան էր ստացել: Հերմոնի համալսարանի սաներից էին նաև **Սարգիսը,** հետագայում՝ Որոտնեցու գործակիցը, **Սիմեոն Ռշտունցին, Վարդան ճգնավորը** և ուրիշներ:

Հերմոնի վանքում համալսարանը գոյատևում է մինչև 1356 թ. և տեղափոխվում նոր բարունապետ Հովհան Որոտնեցու հայրենի գավառ: Հովհան Որոտնեցին ծնվել է 1313 թ. Որոտան գավառի Վաղատին գյուղում, Սյունյաց իշխան Իվանեի ընտանիքում: Եսայի Նչեցուց քահանայական աստիճան ստանալուց հետո Որոտնեցին Տիրատուր Կիլիկեցուց վարդապետական աստիճան է ստանում և կարգվում նրան օգնական, իսկ հետո փոխարինում է նրան որպես համալսարանի բարունապետ: 1363 թ. նրա պատվերով Տփխիսում ընդօրինակվում է Հովհան Դամասկացու մատենագրությունը: Գրիչը նշում է, որ այն գրվել է. Որոտնեցին բարունապետությունը սկսել է մահվանից երեսուն տարի առաջ (1386-30-1356թ.): **Որոտնավանքում մնալով մինչև 1384 թ.,** այնուհետև երկու տարի համալսարանը թափառում է հայրենի երկրում: **1386թ.** Հովհաննես Որոտնեցին հաստատվում է Երնջակի Ապրակունյաց վանքում, և նույն թվականին մահանում: **Համալսարանի բարունապետ է նշանակվում Գրիգոր Տաթևացին:**

Գրիգոր Տաթևացին (Խություշահ) ծնվել է 1344թ. Վրաստանի Թմոգվի բերդավանում, արճիշեցի Ամիր Սարգսի և փարպեցի Մարիամի ընտանիքում: Սովորել է Որոտնեցու համալսարանում և 1373թ. վարդապետական աստիճան ստացել: **Բարունապետի մահից հետո ստանձնել Եսայու մեծ համալսարանի բարունապետությունը՝ Ապրակունյաց վանքում, երու տարի հետո տեղափոխվել է Տաթև** և ծավալել ուսումնամանկավարժական, հասարակական-քաղաքական, մատենագրական բուռն գործունեություն: 1408 թ. տեղափոխվել է Մեծոփավանք և այնտեղ հիմնել գրչության բարձր տիպի դպրոց: 1409թ. Երևանի Անանիա առաքյալի անապատում վարդապետական աստիճան է շնորհել քաջբերունցի իր տասը աշակերտներին: **Սրանք, փաստորեն, Գլաձորի համալսարանի վերջին շրջանավարտներն էին,** որ վարդապետական աստիճան և դասալսելու հրաման ստացան մեծ բարունապետ Գրիգոր Տաթևացուց:

1410 թ. Գրիգոր Տաթևացին վերադառնում է Տաթև և այնտեղ էլ մահանում: «Տեղապահ աթոռոյս վարժապետին» **նշանակվում է Մխիթար վարդապետը**, որն հետո դառնում է ռաբունապետ և ղեկավարում Տաթևի դպրոցը մինչև 1425 թվականը [**5**]:

Գրիգոր Տաթևացու աշակերտներից **Թովմա Մեծոփեցին** ղեկավարել է Մեծոփավանքի բարձր տիպի դպրոցը, **Հովհաննես Հերմոնացին**՝ Հերմոնի դպրոցը, **Կարապետ Խառաբատեցին**՝ Խառաբատի դպրոցը, **Սիմեոն Եղվարդեցին**՝ Այրիվանքի դպրոցը, ապա՝ Եղվարդի դպրոցները, **Մկրտիչ Օրբելենցը**՝ Արգելանի Տեր Հուսկան որդու դպրոցը, **Հակոբ Ասպիսընկացին**՝ Անձղնապատի դպրոցը և այլն: Ի դեպ՝ Հովհաննես Հերմոնացին և Թովմա Մեծոփեցի ռաբունապետերը կատարելով իրենց մեծ ռաբունապետի ցանկությունը, 1441 թ. Ամենայն հայոց կաթողիկոսությունը վերահաստատեցին Վաղարշապատ քաղաքի ս. Էջմիածնի վանքում:

Այսպիսով, **Ներսես Մշեցու ջանքերով հիմնադրվելով 1282թ., Վայոց ձորի Աղբերց վանք-Գլաձորում, հայոց միջնադարյան համալսարանը Եսայի Նչեցու ռաբունապետությամբ գործում է մինչև 1338թ., Տիրատուր Կիլիկեցու ռաբունապետությամբ Հերմոնի վանքում մինչև 1356 թ., Հովհաննես Որոտնեցու ռաբունապետությամբ Որոտնավանք և Ապրակունյաց վանքում՝ մինչև 1386 թ., Գրիգոր Տաթևացու ռաբունապետությամբ Ապրակունյաց վանքում, ապա Տաթևում՝ մինչև 1410 թ., որպես Գլաձորի, Հերմոնի, Որոտնավանքի, Տաթևի համալսարաններ:**

Համալսարանը շուրջ հարյուրհիսունամյա գոյության ընթացքում քույր բարձրագույն դպրոցների և իր սաների դպրոցների ուղեկցությամբ հսկայական գիտական մանկավարժական, հասարակական-քաղաքական, դավանաբանական, ընդհանուր մշակութային գործունեություն է ծավալել ունենալով գաղափարական, ուսումնական, կազմակերպչական գործունեության հստակ ծրագիր: Գլաձորի համալսարանում, ինչպես նշվեց, (“նորոգեցավ զաստիճան վարդապետութեան լուսաւորչացն մերոց”): Մեսրոպ Մաշտոցը և Սահակ Պարթևը աշակերտներ էին հավաքում, սովորեցնում, լավագույններից վարդապետներ պատրաստում և ուղարկում էին գավառները ուսուցչության: **Գլաձորի համալսարանում** ևս (ի տարբերություն նախորդ վարդապետարանների, որ քահանայական կրթությամբ էին ընդունում և հասցնում վարդապետական աստիճանի) երեխաներ էին հավաքագրում, **նախ քահանայական, ապա վարդապետական կրթություն էին տալիս և ուղարկում գավառները**, որ գավառները չմնան առանց վարդապետական ուսման»: Եսայի Նչեցու միարարների դեմ պայքարը նրա սաները շարունակում էին իրենց դպրոցներում: Մխիթար Սասնեցին, ռաբունապետի հանձնարարությամբ, ճառեր էր գրում միարարների դեմ՝ օգտագործելով հենց իրենց՝ միարարների աշխատությունները: Նույնն էին անում Որոտնեցին և Տաթևացին: Գրիգոր Տաթևացին արտագրում է միարարների ձեռնարկներից մեկը՝ համապատասխան պարզաբանությամբ և իր մեկնություններով:

Միջնադարյան Հայաստանում թաթարմոնղոլական, լենկթեմուրյան, և այլևայլ ցեղերի ու բռնակալությունների պատերազմների, ավերածությունների, դավանաբանական նկրտումների պայմաններում հայոց համալսարանի հարյուրհիսունամյա գոյությունը հերոսություն էր, հայ ժողովրդի կենսունակության, հայ մտավորականության՝ եկեղեցու և մշակույթի գործիչների ու նրանց հովանավորների՝ հայրենիքի և ժողովրդի նկատմամբ ունեցած անսահման սիրո և նվիրվածության արտահայտություն, որի համար հիմնական զենքը մայրենի լեզուն ու գիրն էր, հայոց դպրությունը, նախնիների ավանդներին հավատարմությունը:

Ընդհանուր գծերով մերօրյա Գլաձորի երկունքը նույնպես դժվարին եղավ: Նրա երեսունամյա ուղին ևս հեշտ ու հարթ չէր, սակայն հավատարիմ մնալով իր միջնադարյան նախորդի կրթության և մշակույթի նվիրյալի առաքելությանն ու լավագույն ավանդույթներին, շարունակում է արարել և, անկասկած, իր ազգանվեր գործունեությունը կշարունակի երկար ու երկար տարիներ:

Օգտագործված գրականության ցանկ

1. **Կորյուն**, Վարք Մաշտոցի: - Երևան, 1941
2. **Ալպոյաճյան Ա.**, Պատմութ յուն հայ դպրոցի: - Կահիրե, 1946
3. **Մաթևոսյան Ա.**, Անանիա Շիրակացու «Քննիկոնը» («ԼՀԳ», թիվ 7, էջ 66-78, թիվ 8)
4. Մեսրոպ Մաշտոցի անվան մատենադարան, ձեռ. թիվ 4517
5. «ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», կազմեց Լ. Ս. Խաչիկյան, Երևա ն, 1950,
6. **Տաշյան Հ.**, Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց մատենադարանին Մխիթարյանցի Վիեննա, Վիեննա. 1895
7. **Հովսեփյան Գ.**, Թովմա Մեծոփեցու կյանքը, Վաղարշապատ, 1914
8. **Հովսեփյան Գ.**, Խաղբակյանք կամ Պռոշյանք հայոց պատմության մեջ: - Վաղարշապատ, 1928

Сдана/Հանձնվել է՝ 21.07.2020
Рецензирована/Գրախոսվել է՝ 23.07.2020
Принята/Ընդունվել է՝ 26.07.2020